Աշխարհի 150-ից ավելի մարդասերներ, գործարարներ և քաղաքական առաջնորդներ պահանջում են հայ բանտարկյալների ազատությունը

Նոբելյան մրցանակակիրներ, խոշոր գործարարներ, պետությունների նախկին ղեկավարներ և քաղաքացիական հասարակության առաջնորդներ միավորվել են՝ կոչ անելով անվերապահորեն ազատ արձակել Ադրբեջանում ապօրինաբար կալանքի տակ պահվող հայերին:

Ավելի հայտնի բանտարկյալներին բաց չթողնելը Բաքվի կողմից քաղաքական հաշվեհարդարի դրսևորման արտահայտություն է: ԱՄՆ Կոնգրեսում և Եվրոպական խորհրդարանում ամրապնդվում է Ալիևի ռեժիմի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու պահանջը:

Նախկին նախագահներ Մերի Ռոբինսոնը, Էռնեստո Զեդիլյոն, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Լեյմա Գբովին, Օսկար Արիասը և Շիրին Էբադին, ձեռներեցներ Ռիչարդ Բրենսոնը, Մարկ Բենիոֆը, հրատարակիչ Արիանա Հաֆինգթոնը և համաշխարհային այլ գործիչներ ստորագրված նամակում մտահոգություն են հայտնում Լեռնային Ղարաբաղի առաջնորդների, ներառյալ հումանիտար գործիչ Ռուբեն Վարդանյանի կալանավորման հարցով:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12, 2023 թ. –Միջազգային լայն ճանաչում և համբավ ունեցող ավելի քան **150** գործիչներ, ներառյալ՝ Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, պետությունների նախկին ղեկավարներ, հայտնի գործարարներ և հումանիտար գործիչներ նամակ են ստորագրել՝ կոչ անելով անհապաղ և անվերապահորեն ազատ արձակել **հայ**, այդ թվում՝ ութ հայ քաղաքական բանտարկյալներին՝ Լեռնային Ղարաբաղի նախկին ղեկավարներին, որոնք ապօրինաբար ձերբակալվել են սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղ ներխուժելուց և այն գրավելուց հետո: Բացի նրանցից, տասնյակից ավելի գերիներ շարունակում են մնալ կալանքի տակ:

Համատեղ կոչ-նամակը ստորագրողները լուրջ անհանգստություն են հայտնում կալանավորված անձանց, ներառյալ հայ նշանավոր գործարար ու մարդասեր Ռուբեն Վարդանյանի պահման պայմանների և նրանց հանդեպ վերաբերմունքի առնչությամբ: Նրանց ձերբակալությունը հաջորդել է ադրբեջանական ուժերի կողմից իրականացված էթնիկ զտման արշավին:

Դեկտեմբերի 7-ին 32 հայ գերիների ազատման մասին հայտարարությունը թեև սպասված առաջին քայլն էր, սակայն մյուս բոլորը ևս պետք է ազատ արձակվեն: Ութ քաղաքական բանտարկյալների և մնացած գերիների՝ Բաքվի կողմից ազատ չարձակելու փաստը ավելի է խորացնում Ալիևի ռեժիմի կողմից նրանց շարունակական կալանքի տակ պահելու շարժառիթների վերաբերյալ մտահոգությունը:

«Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով մարդու իրավունքների խախտումները հրատապ ուշադրություն և գործողություններ են պահանջում, - ընդգծել է նամակն ստորագրած Նուբար Աֆեյանը, որը նաև «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիրն է: - Նախագահ Ալիևը քաղաքական հաշվեհարդարը նախընտրում է արդարությունից: Մենք հավատում ենք յուրաքանչյուր անհատի անկապտելի արժանապատվությանն ու իրավունքներին և միջազգային հանրությանը կոչ ենք անում միանալ մեզ՝ դատապարտելու համար այս անարդարությունը»:

Համաշխարհային ու տարածաշրջանային տնտեսական զարգացման և մարդասիրական ծրագրերում Աֆեյանը երկար ժամանակ համագործակցել է Վարդանյանի հետ, որը դարձել է տարածաշրջանում քաղաքական ազատության ու մարդկային արժանապատվության համար մղվող պայքարի խորհրդանիշ: Նրա անարդարացի բանտարկությունը աշխարհի պատկառելի անձանց մղել է իրենց ձայնը բարձրացնել՝ ի պաշտպանություն նրա և անարդարացիորեն կալանավորված մյուս անձանց :

«Մենք կոչ ենք անում նախագահ Ալիևին կատարել միջազգային իրավունքի հանդեպ իր պարտավորությունները՝ ապահովելով, որ անարդարացիորեն կալանավորված անձինք կարողանան անվտանգ վերադառնալ իրենց տուն , - ասել է ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի փոխնախագահ և «Unilever» ընկերության նախկին գործադիր տնօրեն Փոլ Փոլմանը:- Լեռնային Ղարաբաղում բոլոր անձինք ունեն խաղաղ ու անվտանգ կյանքի, ներառյալ՝ ազատ և անարգել տեղաշարժի և անմարդկային վերաբերմունքից զերծ լինելու իրավունք: Հաշվի առելով COP29-ը հյուրընկալելու Ադրբեջանի ներկայացրած հայտը՝ անկեղծորեն ցանկանում եմ հուսալ, որ ՄԱԿ-ը դրան համաձայնություն կտա միայն բոլոր գերիներին ազատ արձակելու դեպքում»:

Փոլմանը մեկն է նամակն ստորագրած անձանցից , որոնց թվում են նաև, օրինակ, Մեքսիկայի նախկին նախագահ Էռնեստո Զեդիլյոն, Իռլանդիայի նախկին նախագահ Մերի Ռոբինսոնը և Կոստա Ռիկայի նախկին նախագահ և Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Օսկար Արիասը: Նամակը ստրագրած նշանավոր մյուս անձինք ներկայացնում են տարբեր ոլորտներ. նրանց թվում են «Salesforce» ընկերության գործադիր տնօրեն Մարկ Բենիոֆը, «Thrive»-ի և «The Huffington Post»-ի հիմնադիր Արիանա Հաֆինգթոնը և հայտնի երաժիշտ և «System of a Down» խմբի գլխավոր մենակատար Սերժ Թանկյանը:

«Ռուբեն Վարդանյանի և մյուսների ապօրինի կալանավորումը խախտում է նրանց հիմնարար իրավունքները, - ասում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների նախկին գերագույն հանձնակատար Մերի Ռոբինսոնը: -Որպեսզի համաշխարհային հանրությունը հարգի Ադրբեջանի կառավարությանը, շատ կարևոր է, որ վերջինս էլ հարգի օրենքի գերակայությունը, հատկապես, Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտումների լույսի ներքո: Նրանք պետք է անհապաղ ազատ արձակեն կալանվածներին»:

Նրանց միասնական կոչը որպես հիշեցում է հնչում այն մասին, որ համաշխարհային քաղաքական առաջնորդներն աչալրջորեն հետևում են Ադրբեջանում կատարվող իրադարձություններին և կոչ են անում ազատ արձակել կալանավորվածներին: Ինչպես շեշտվում է նամակում, հայ գերիների կալանավորումը միջազգային իրավունքի նորմերի, այդ թվում և Ժնևի երրորդ կոնվենցիայի բացահայտ խախտում է:

Վերջին շաբաթներին Եվրախորհրդարանի և Եվրոպական խորհրդի անդամները հետամուտ են եղել Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղ համաձայնագրի կնքմանը և Լեռնային Ղարաբաղում հակամարտությունից բխող ապօրինաբար պահվող բոլոր կալանավորների ազատ արձակմանը: Եվրախորհրդարանը հոկտեմբերին բանաձև է ընդունել, որով Ադրբեջանին կոչ էր արվում ազատ արձակել և պարտավորվել լայն համաներում կիրառել Լեռնային Ղարաբաղի բոլոր այն բնակիչների, այդ թվում՝ նախկին պաշտոնյաների նկատմամբ, որոնք ձերբակալվել են սեպտեմբերի 19-ից հետո:

Նույն կերպ ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆն է (դեմոկրատ Կալիֆորնիայից) բանաձև ներկայացրել, որով Ադրբեջանին կոչ է արվում անհապաղ ազատ արձակել Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի վրա ադրբեջանական հարձակումների ընթացքում կալանավորված բոլոր ռազմագերիներին և ներկայումս կալանքի տակ պահվողքաղաքացիական անձանց:

Ստորագրողների ամբողջական ցուցակը և նամակի պատճենը հասանելի են հետևյալ հղմամբ [https://freearmenianprisoners.com/hy/]:

Նամակի վերաբերյալ հարցերի կամ այս ջանքերին աջակցելու , թեմայի վերաբերյալ հարցազրույցներ կազմակերպելուհամար կարող եք կապ հաստատել contact@freearmenianprisoners.com էլ. հասցեով:

###

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՁԸ

Կապ.

Նիա Ջաքսոն
Edelman Global Advisory
+1 202 983 0478
nia.jackson@edelmanega.com

Անահիտ Ակոբյան
H/Advisors
+33 7 87 38 79 80
anahit.akopian@havas.com